

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-Ի ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-ԻՆ

ԱԴԻՍ-ԱԲԵԲԱ

Մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոների առիթով, հանուն Հայաստանյայց եկեղեցու, Մենք հաճույքն ունենք Ձերդ կայսերական Վեհափառության ներկայացնել Մեր սրտագին, ամենալավ բարեմաղթությունները:

Թող Ամենակալը Ձերդ Վեհափառությանը հաստատ ու փառավոր պահի կայսերական իր գահի վրա և Ձեր գեղեցիկ երկիրը պահի-պահպանի խաղաղության և բարօրության մեջ:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

***

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենաանկեղծ շնորհակալություն ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր բարի ցանկությունների և ազնիվ պատգամի համար, որը խորապես երախտապարտ է թողնում Մեզ:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ
Կայսր Եթովպիայի

ԱՍՄԱՐԱ